

ՄԱՍ 3. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է Ծառայության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների (Երևան քաղաքի և մարզային գործակալություններ) մեթոդաբանական կարողությունների ամրապնդման գործընթացը: Տարածքային վիճակագրության վարման արդյունավետության բարձրացման, վիճակագրության վարման միջազգային չափանիշներին իրազեկ լինելու նպատակով, տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների համար կազմակերպվել են սեմինարներ և խորհրդակցություններ:

2007թ. մշակվել է «Տարածքային վիճակագրության զարգացման ռազմավարության» նախագիծը և Ծառայության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացման, համակարգման, մոնիթորինգի, վերահսկողության և որակի կառավարման համակարգի հիմնական միջոցառումներն ու մեխանիզմները:

Ուսումնասիրվել են վիճակագրական ենթատեքստով տարածքային բաժանման «Տարածքային միավորումների անվանացանկ վիճակագրության համար» դասակարգչի և տարածքային կտրվածքով ՀՆԱ-ի և այլ ագրեգացված ցուցանիշների հաշվարկման Եվրոստատի կողմից մշակված մեթոդաբանությունն ու երաշխավորությունները: Դրանց հիման վրա մշակված «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի դասակարգչի» նախագիծը շահագրգիռ պետական կառավարման մարմիններին կարծիքի ներկայացվելուց և վերջիններիս առաջարկություններն ու դիտողությունները հաշվի առնելուց հետո հաստատվել է և երաշխավորվել կիրառության վիճակագրական նպատակներով¹:

Շարունակվում են Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի կտրվածքով վիճակագրական ցուցանիշների բազայի ձևավորման աշխատանքները:

Ծառայության ինտերնետային կայքէջի «Տարածքային վիճակագրություն» բաժնի «Հայաստան» ենթաբաժնում քարտեզային և աղյուսակային պատկերմամբ գետեղվել են Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 2005-2008թթ. վերաբերյալ եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) վիճակագրական ամփոփ տեղեկատվությունը, իսկ «Հրապարակումներ» ենթաբաժնում՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2007 (2002-2006)», «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2008», «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009» երկլեզու (հայերեն և անգլերեն) վիճակագրական ժողովածուները, «Ատլաս» Հայաստանի Հանրապետությունը մարզերով, 2007, 2008, 2009» եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) վիճակագրական էլեկտրոնային հրապարակումները, ինչպես նաև 11 նոր հրապարակումներ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի վերաբերյալ:

¹ Ընդունվել է Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2010թ. հունվարի 25-ի թիվ 01-Ն որոշմամբ: